

❖ ՔՈՒՉԱԿԵԱՆ ՏԱՂԵՐ ❖

Ա. ԽՈՒՄԲ

Հոգին հողվերօքն անցաւ, ու զմարմինն ի հողն անիծեց.
Մարմինն ի հողուն ի դուրս հոգուն մէկ խօսօք վըճարեց:
Ըզմեղքն ես եւ դու արանք, յետեւ իմ երեսն ամաչեց.
Ես հող էի՝ հող դարձայ, քո ամալն որ ըզքեղ բըռնեց:

* * *

Մէկ մարդ մ'ըզիետատն ունի և զվարդին տակըն կուփորէ.
Պլպուլն ի վարդին սիրուն զիր շըլիքն ի դէմ կու բերէ.
Արծիւն ի հաւան ելեր ու կ'ասէ թ'այտ ինչ աճապ է.
Թեպուր մ'յիմ թեւէս ընկեր՝ նետ եղեր ու զիս կու խոցէ:

* * *

Այն մարդն որ ի դուրն երթայ՝ գէմ պիտի զդըժարն անտիճէ
Շաքրին չատ ուտել չվայլէ՝ Աղամորդուն սրտին կ'ահոկէ.
Մըտիկ լեռներուն արէք՝ խելօքի ասած մասալ է.
Այն որ բարձր է ձիւն ունի, այն որ ցածն՝ ինչ խօշ կանանչ է:

* * *

Կանչեմ հօտ ի վեր Աստուած՝ իմ մեղաց ճարակն ի քէն է.
Երէցն եւ աւետարան՝ Աստուծոյ մօտիկ նըշան է.
Զինչ շարթուն որ մեղք գործես, կիրակի զայն խոստովանէ.
Առնուս անթառամ պըսակ՝ յանտենի՝ հուրն ըզքեղ չը երէ:

* * *

Կանչեմ հօտ ի վեր ստեղծօղ՝ զամենայն դարիալ դու պահէ.
Իմ տէրն ի զարիպութիւն՝ իր կըրակն ըզիս կու երէ.
Զիր դալն ինձ շուտով արա՛, զիմ ամէն զանգատ նա դիտէ.
Երեսս երեսին դընեմ, որ հոգեկս ի ծոցն ելանէ :

* * *

Պլազուլն ի ծովին միջին ի աւճուն բերանն կու ասէ .
Թող ես եմ ի յաս հալիս , թող իմ վարդըն գէշ չը քաշէ .
Վարդն այլ ի փրախն միջին սուտ ի քուն եւ զայն կու լըսէ .
Լօք զիր շարեղէն շապիքն ի չորեք դիհաց կու խըզէ :

* * *

Թէ չուզես որ քուֆր ասես՝ ձեռքըդ տար ու սիրացդ բըռնէ .
Ոչ քուֆրըն քի հաց բերէ , ո՛չ թացան թէ նիստ ու ծախէ :
Անշահ ՚և անօգուտ բան է քուֆր ասելն , որ խիստ մե-
ղանք է .
Սատնայ յիշոցք ասաց , դեռ յանկից ի վեր կու յիշէ :

* * *

Հայ իմ մէկ ու մէկ Աստուած , մէկութիւնըն քեզ վայելէ .
Զով որ դու ի վեր հանես՝ մարդ ի վայր բերել չըկարէ .
Զան հացն որ դու տաս ուտել՝ մարդ իսկի խըլել չը կարէ .
Զուր ի կենաց աղբերէդ ով խըմէ՝ անմահ մընասցէ :

* * *

Գիշե՛ր , դու յերկան եղիր եւ տարեկ մ'եղիր թէ կարես .
Իմ եարն ինձի հիւր 1) եկեր՝ զէտ հազար տարու թէ գիտես .
Առաւօտ , դու յետ կեցիր՝ որ ըզմեր խաղըն չաւիրես .
Երբ ըզլոյսն ի վեր բերես , զիս ի յիմ եարէս բաժանես :

* * *

Զիմ եարն ի գընալ տեսայ , որ կ'երթար ի ճամփատ ի վար .
Մանըը քայլուփոխ 2) կ'անէր , եւ քաղէր ծաղիկ նոնոֆար .
Յամէն հանգչելու 3) տեղիկ երեսին զընէր ու կուլար .
Կուրնա՛ չարկամնուն աչերն՝ կու պահեն զիս քենէ օտար :

(Շար.)

Հրատ. Հ. ՆԵՐՍԵՍ ԱԿԻՆԵԱՆ

1) Զեռ . հուր : - 2) Քայլուփոխ : - 3) Համիչելու :